

**Հարցաշար**  
**Հայոց լեզվի օլիմպիադայի մարզային փուլի**

**9-րդ դասարան**

**Տևողությունը 150 րոպե**

Մի մարդ հեքիաթային ծաղկանոց ուներ: Այնտեղ վարդերի զգլխիչ փնջերն իրենց անկրկնելի բույրն էին սփռում: Շենշող արևի ներքո ժպտում էին թույրիթույր աստղածաղիկները: Ճերմակ ու նուրբ շուշանները պչրանքով օրորվում էին՝ գրուցելով ակնահաճո վարդակակաչների հետ: Տարածելով հաճելի բույրեր՝ երփնավառ մեխակները փորձում էին դուր գալ ինքնատիպ ու քմահաճ խոլորձներին: Բարձրացողուն թրաշուշաններն էլ ասպետորեն հսկում էին, որ խելակորույս քամին չխաթարի այգու անդորրը:

Մի օր մարդը տեսավ, որ իր դրախտային պարտեզում դաշտային անմոռուկներ են հայտնվել: «Սրանք այնքան նսեմացնում են ծաղկանոցի տեսքը», – վրդովված մտածեց նա: Այգու բնակիչները, սակայն, սիրով հյուրընկալել էին նորեկներին՝ ամեննին չնեղվելով նրանց հարևանությունից: Պարտիզպանը, որ շատ ցավագին էր տանում անկոչ հյուրերի ներկայությունն իր պարտեզում, ամեն միջոց ձեռնարկեց՝ հեռացնելու նրանց: Երբ հասկացավ, որ ոչինչ չի օգնում, դիմեց բուսաբան ընկերոջը.

- Ինչպե՞ս ազատվեմ այդ անշուք անմոռուկներից: Ի՞նչ անեմ:
- Փորձի՛ր սիրել նրանց, – խորհուրդ տվեց ընկերը:

1. Մեկնաբանի՛ր տեքստի գաղափարը 3 նախադասությամբ: (3 միավոր)
2. Բնութագրի՛ր պարտիզպանին, ընկերոջը և ծաղիկներին՝ մեկական պարզ ընդարձակ նախադասություններով: (3 միավոր)
3. Նշի՛ր տեքստում ընդգծված ստորադաս նախադասությունների բնույթը: (1 միավոր)
4. Գրի՛ր տեքստում գործածված *ներքո, այնքան, սակայն, ամեննին, երբ* բառերի խոսքիմասային արժեքները: (2 միավոր)
5. Տեքստից դուրս գրի՛ր պարզ, ածանցավոր, բարդ և բարդաձանցավոր ածականների երկուական օրինակ: (2 միավոր)
6. Կազմի՛ր նախադասություններ *լույս* և *հրաշք* բառերի փոխաբերական իմաստներով: (1 միավոր)
7. Գրի՛ր *բռնագրոսիկ, հոտաղ, խոտոր, ունայն, շամանդաղ* բառերի երկուական հոմանիշ (2 միավոր):
8. Կազմի՛ր նախադասություններ *տարելից* և *տարեղարձ* բառերով: (1 միավոր)
9. Բացատրի՛ր *եզոպոսյան լեզու* թևավոր խոսքը: Տուր ծագման մեկնաբանությունը: (1 միավոր)
10. Գրի՛ր շարադրություն «Դարերի անկոտորում ճամփորդը» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)